



2018թ. հունիսի 29-ին ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունցն այցելել է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան: Արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանի ուղեկցությամբ Լ.Մակունցը սկզբում շրջել է «Էրեբունի» ամրոցում, ապա դիտել թանգարանի մշտական ցուցադրությունը և իր տպավորություններով կիսվել թանգարանի Պատվավոր հյուրերի մատյանում:

Այցի շրջանակում Մշակույթի նախարարը ծանոթացել է «Էրեբունի» ամրոցի վերականգնման ծրագրին, ներկայացվել են արգելոց-թանգարանի ընթացիկ խնդիրները և քննարկվել «Էրեբունի» թանգարանի ներգրավվածությունը ՀՀ Մշակույթի նախարարության նախաձեռնած կրթական ծրագրերին: